ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 27-Ա
23 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱԼԻՁՈՐ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 2/9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՌԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԵՐԻՑ 0.0056 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48[1]-րդ և 76-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Կապանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 723-Ն, Կապանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 13-ի «Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն համարվող հողամասերը հրապարակային սակարկություններով /մրցույթով/ կառուցապատման և /կամ/ վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու տարեկան մեկնարկային վարձավճար սահմանելու մասին» թիվ 95-Ն որոշումները և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության _7_ կողմ, _0_ դեմ, _1_ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնքի Կապան քաղաքի Հալիձոր թաղամասի թիվ 2/9 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության խառը կառուցապատման հողերից 0.0056 հա հողամասը /ծածկագիր 09-001-1802-0003/

ավտոտեխսպասարկման կայան կառուցելու նպատակով 25 /քսանհինգ/ տարի ժամկետով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել մրցույթով՝ մեկնարկային վարձավճար սահմանելով տարեկան 31680,0 /երեսունմեկ հազար վեց հարյուր ութսուն/ դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ (7)՝

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ

Դեմ (0)

Ձեռնպահ (1)

ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2018թ փետրվարի 27
ք. Կապան